ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ՄԱՆԵԿԵՆ

Մայիսի մեկի օրը տոն է սկզբից մինչև վերջ: Արթնանում ես առավոտյան և հոգիդ արդեն լցված է տոնական տրամադրությամբ: Նայում ես լուսամուտից դուրս՝ արև է, պայծառ օր: Գուցե երեկ ամպամած էր, գուցե վաղն անձրև է լինելու, բայց Մայիսի մեկը միշտ արևոտ է: Ես չեմ հիշում ամպամած Մայիսի մեկ: Բնությունը, կույր պատահականությամբ, ամեն անգամ այդ օրը հավաքում-թաքցնում է իր ամպերը և սրբում-մաքրում է երկինքը:

Բայց գուցե և այդպես չէ, գուցե և հանդիպել են ամպամած Մայիսի մեկեր, բայց ես չեմ նկատել դրանք և չեմ հիշում այժմ: Արևն առատ շողացել է փողոցից լսվող շտապ ոտնաձայների մեջ՝ շտապ, բայց ոչ գործնական, այլ դեպի իրենց կոլեկտիվն շտապող մարդկանց: Արևը շողացել է արդեն շատ տեղերում թնդացող նվագի մեջ, ռադիոյի տարածած տոնական խոսքերի, քո տնեցիների դեմքերի արտահայտության, նույնիսկ նախաճաշի սեղանի…

Տոնական տրամադրությունը չի ավարտվում շքերթի հետ միասին, այլ ավելի է թափ առնում դրանից հետո: Կարմիր հրապարակով անցնելուց հետո ժողովուրդը ցրվում է Մոսկվայով մեկ՝ ինչպես գինին մարդու մարմնով, և տարածում է տոնական տրամադրությունն ամենուր: Երեկոյան մարդիկ նորից հավաքվելու են Կարմիր հրապարակ և շրջակա փողոցները՝ դիտելու համար տոնական սալյուտի գույնզգույն հրթիռները, լսելու համար ժողովրդի տոնական դժժոցը և իր շշուկն ևս մասնակից բերելու դրան:

Տոնական է տրամադրությունը նաև դրանից հետո, երբ մարդիկ ցրվում են ուշ երեկոյան՝ գնալու համար իրենց տները: Տոնը չի ավարտված, մարդիկ իրենց դեմքերի վրայից չեն սրբել տոնական արտահայտությունը և չեն կենտրոնացել՝ մտածելու համար վաղվա աշխատանքային օրվա մասին: Ոչ, վաղն այսօրվա շարունակությունն է, մայիսի երկուսը՝ «մայովկան»:

Մայիսի մեկի ուշ երեկոյան ես Պուշկինսկայա բազմամարդ փողոցից թեքվեցի Ստոլեշնիկով «նրբանցք» կոչվող փողոցը՝ տուն գնալու համար: Այդտեղ արդեն ոչ ոք չկար: Բայց ի՞նչ նշանակություն ունի դա: Իմ երկու կողմերում շողշողում էին Մոսկվայի ամենահայտնի փողոցներից մեկի շքեղ ցուցափեղկերը՝ լուսավոր, թեկուզև փակ: Իսկ շրջակա փողոցներում՝ ետև թողած Պուշկինսկայայում, առջևում ընկած Պետրովկայում և այլուր, դեռ շրջում էր ժողովուրդը: Ես լսում էի մարդկանց ոտնաձայները, զվարթ խոսակցությունները, ծիծաղը: Իսկ եթե անգամ չէի լսում՝ ապա կթում էի հոգուս մեջ որպես թարմ տպավորություն, մի քիչ առաջ լսածի հուշ, տրամադրություն: Շուրջս և իմ մեջ ամբողջ Մոսկվան շարժման մեջ էր:

Եվ հանկարծ ես կանգ առա ապշած: Տոնին անհաղորդ, ընդհանուր շարժմանն անմասնակից, ցուցափեղկերից մեկի մեծ ապակու ետևում կանգնել էր լավ հագնված, գեղեցիկ, մի երիտասարդ կին՝ մանեկեն... Կանգնել, ոչինչ չտեսնող հայացքով նայում էր դուրս և ոչ ուրախ էր, ոչ տխուր, սառած դիմագծերով, քարացած դիրքով. . .

Անկենդան, անշարժ մանեկեն... Իմ տեսած միակ մարդը Մոսկվայում, որը չէր մասնակցում մեր խնդությանը: Մարդ, որն ուներ միայն մի ֆունկցիա՝ ցույց տալ մեզ իր գեղեցիկ հագուստը: Բայց ոչ: Նույնիսկ դա՝ ոչ: Ոչ թե ինքն էր ցույց տալիս, այլ, փայտացած-կանգնած, ծառայում էր այն բանին, որ ուրիշները հագցրած լինեն նրա վրա հագուստը, ուրիշները ցույց տան…

Բողոքի լուռ, բայց համառ ալիքը խփվեց իմ սրտին: Մի՞թե կարելի է առնել մարդկային կերպարանք՝ միայն անշարժ կանգնելու համար, և թույլ տալու, որ նրա վրա հագցնեն և ցույց տան

ինչ-որ հագուստ... Դրա համար կան կեռեր, կախարաններ: Բայց դրան ծառայեցնել մարդո՞ւն՝ տոնին անտարբեր, սառած հայացքով...

Ես բողոքում եմ, որ դու ունես մեր կերպարանքը և միայն կերպարանքը: Եթե չես կարող տոնական ուրախությամբ շողացնել աչքերդ կամ ժպիտից ետ տանել շրթունքներդ, գոնե բարկացիր ինձ վրա, վիրավորիր ինձ, մանեկեն: Այդ դեպքում մենք կբաժանվենք իրարից խռոված, բայց կբաժանվենք որպես երկու մարդ…

Բայց դու անկարող ես շարժել քո ո՛չ մի դիմագիծը, քո ճկույթն անգամ…

Այդ պահին ես հիշեցի մի ուրիշ դեպք: Դա Երևանում էր: Ես անցնում էի Կիևյան փողոցով, և մի ցուցափեղկում, ինձ ծանոթ երկու մանեկենների կողքին— լավ հագնված տղամարդու և կնոջ — տեսա մի երրորդը, որի տեսքը զարմացրեց ինձ:

Որ այդ մանեկենի վրա հագցրել էին աշխատանքային կապույտ խալաթ, իսկ գլխին դրել էին սպիտակ գլխանոց՝ դա դեռ ոչինչ: Վերջիվերջո, հո միայն շքեղ կոստյումներ չէ՞, որ պիտի ռեկլամեն մանեկենները: Ինձ զարմացրեց մի ուրիշ բան. այդ երրորդ մանեկենը կանգնեցրել էին ոչ թե լրիվ դեմքով դեպի փողոցը, այլ պրոֆիլով: Ընդ որում նա բոլորովին էլ գեղեցիկ չէր ո՛չ դեմքով, և ո՛չ էլ կազմվածքով:

Եվ հանկարծ այդ մանեկենը շարժվեց... Մարդ էր, կենդանի աղջիկ: Բարձրացել էր ցուցափեղկ՝ ինչ-որ բան փոխելու համար և սպասում էր մի ուրիշին, որն ինչ-որ իր էր տալու նրան: Սպասելուց ձանձրացած, նա շարժվեց, ինչ-որ բան բղավեց դեպի ներս, ապա շուռ եկավ դեպի փողոց՝ իր սպասումը կարճելու, դուրս նայելու համար:

Ի՞նչ տեսավ նա իմ դեմքի վրա՝ չգիտեմ: Բայց նա հասկացավ, որ ես նրան դրել էի մանեկենի տեղ, և սկսեց քրքջալ. Ես չէի լսում նրա ձայնը հաստ ապակու միջով: Բայց մի՞թե, իրոք, չէի լսում: Մի՞թե չէի զգում նրա մարդկային ջերմությունը, կենդանությունը: Նա անսահման ավելի գեղեցիկ էր, քան նրա կողքին կանգնած երկու շքեղ մանեկենները:

Եվ ահա այժմ, Ստոլեշնիկով փողոցի ցուցափեղկի առջև կանգնած, ես հիշեցի այդ դեպքն ու սկսեցի ակամայից սպասել, որ այդ մանեկենը նույնպես կատարի որևէ շարժում... Ոչ…

Հեռանալուց առաջ ես թախիծով չէ, որ հրաժեշտ տվեցի մանեկենին: Ես բարկությամբ, համարյա ատելությամբ նայեցի նրան, որ մեր մեծ տոնի ընդհանուր շարժման ու խնդության մեջ կանգնել էր այդքան անշարժ ու անտարբեր, մեր կերպարանքով, բայց առանց մեր ջերմության, հոգու...

Եվ միայն քիչ հետո, երբ արդեն մոտենում էի իմ բնակարանին, հասկացա, որ ես բարկացած եմ ոչ թե դժբախտ մանեկենի վրա, այլ նրան ստեղծող դաժան մի մարդու, որը նրան տվել էր մեր տեսքը և միայն տեսքը:

Խեղճ մանեկեն... Եթե իմանայիր, թե ինչ օր է Մայիսի մեկը…

Իմանայիր, թե ինչ բան է կյանքը...